

## ՄԱՍԼՈՅ ԱՐՉԱԿՈՒՐԴ

Համաձայն մամուլի և խմբագիրներու սեփականությունը համատեղ որոշումին, իսլամական Աշուրա տոնին առիթով միջուկ արձակուրդ կ'առնեն լիբանանեան օրաթերթերը:

«Արարատ»-ի յաջորդ թիւը լոյս կը տեսնէ Ուրբաթ, 19 Յուլիս 2024-ին:

## ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԹՂԹԱԾՐԱՐ

Նախագահական թղթածրարի քննարկումի ծիրին մէջ, խումբ մը ընդդիմադիր երեսփոխաններ խորհրդարանին



մէջ ժողով գումարեցին «Անկախ ազգային պլոք» երեսփոխանական համախմբումին հետ, որուն անդամներն էին Թոնի Ֆրանսիէ եւ Ֆարիտ Չալալ Ալ Խալէ: Այս անոնք ժողով գումարեցին Սայտա եւ Շրճգին գաւառներու երեսփոխաններուն հետ:

### ՅԱՐԱԿՈՒՄ ԶԱՐԱԲՅՈՒՄ ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐԱՅ

Երէկ իսրայելեան անօդաչու սարք մը Ում Ալ Թուֆ գիւղին մօտ ընթացող երկրագործութեամբ զբաղող խումբ



մը սուրիացի գործադուրներ, որոնցմէ քանի մը հոգի գոհ գացին այս յարձակումին: Նաեւ անօդաչու սարք մը ընթացող մորթորսիքը մը իսրայելի կամուրջին վրայ ու անոր երկու ուղեւորները վիրաւորուեցան: Առաւօտեան Զֆար Զիլա ենթարկուած էր ընթացող միջոցով արգիլուած ֆոսֆոր սիւթով: Որպէս հակադարձութիւն, Զըզպալլա ընթացողը Զրիաթ Շննա գաղթականները:

## ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ՄԱՐՈՒՄԵՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱԾԱՐԱԿՄԱՆ

Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն ընդունեց կառավարութեան հրաժարականը: Ըստ սահմանադրութեան, խորհրդարանական ընտրութեան առաջին դիրքը գրաւող



կուսակցութիւնը, այս պարագային ժան-Լիւք Մելանշոնի ձախակողմեան դաշինքը, պետք է կազմէ կառավարութիւնը, սակայն չունենալով բաւարար թու խորհրդարանին մէջ եւ չկարենալով կազմել դաշինք մը Մաքրոնի աջ կեդրոն կուսակցութեան հետ, ներկայիս նախկին կառավարութիւնը պիտի վարէ երկրին գործերը գործակատարի կարգավիճակով:

### ՄԵՆԵՆՏԵՂ ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ

Միացեալ Նահանգներու հայասեր ծերակուտական Ռոպըրթ Մենենտեղ ամբաստանուեցաւ փոստովութեամբ,



երբ իր բնակարանէն գտնուեցան ոսկիի կտորներ եւ հազարաւոր ԱՄՆ տոլարի կանխիկ գումար: Նիւ Ճըրզիի 70-ամեայ ծերակուտական Մենենտեղ ամբաստանուեցաւ Եգիպտոսէն ու Զարթաբէն գործարարներէ կաշառք անելու մէջ: Մենենտեղ արդէն հրաժարած էր ծերակուտի Արտաքին յարաբերութեան ազդեցիկ յանձնախումբի նախագահի պաշտօնէն Մեյքոնքեր 2023-ին:

## «ՊԵՏՔ Ե ՅԱՂԹԵՆՔ «ՅԱՄԱՍ»ԻՆ»

Իսրայելի վարչապետ Պենիափին Նեթանիահու յայտարարեց, թէ «Յամաս»ին պետք է յաղթեն: Ան ասելցուց, որ հակառակ այն բարձր գինին, որ պիտի վճարեն, պետք է



յաղթեն պաղեստինեան կազմակերպութեան: Նեթանիահու շեշտեց, որ Իսրայելի միասնականութիւնը կարեւոր գործօն է այս փուլին:

### «ՅԱՄԱՍ» Կ'ԱՄԲԱՍՏԱՆԵ

Պաղեստինեան «Յամաս» շարժումը ամբաստանեց Միացեալ Նահանգներու նախագահ Ծօ Պայտընի վարչակազմը՝ Իսրայելի կողմէ հազարաւոր պաղեստինցի քաղաքացիներու ոչնչացումին համար: Ան հաստատեց, որ այն ռումբը, որ գործածուեցաւ Իսրայելի կողմէ՝ ընթացող իր համար ԻՆՏԵՐՆԱԿԱԶՄԻ Կազմակերպութեան պատկանող դպրոցը հան ետնէսի Նուսէյրաթ գաղթականային մէջ, տրուած է ԱՄՆ-ի կողմէ: Կան 40 զոհեր ու տասնեակ վիրաւորներ անմեղ քաղաքացիներու շարքերէն: Իսկ ցարկ սպանուած պաղեստինցի թղթակիցներու թիւը հասաւ 160-ի: Ըստ վերլուծողներու, Իսրայել ծրագրուած ձեռքով կը սպաննէ թղթակիցները լռեցնելու համար զանոնք:

Միւս կողմէն, Կազախի մէջ գործող պաղեստինեան առողջապահութեան նախարարութեան աղբիւրը յայտարարեց, թէ զոհերու թիւը հասաւ 38.713-ի, իսկ վիրաւորներուն թիւը՝ 89.166-ի:

### ԻՍՐԱՅԵԼ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՍԵՄԻՆ

Իրանի արտաքին գործերու նախարարի գործակատար Ալի Պաքըրի Զեյնի յայտարարեց, թէ Իսրայել կորսնցնելու վրայ է պատերազմը Իրանի դաշնակիցներուն հետ: Ան հաստատեց, որ Իսրայել կը սպաննէ պաղեստինցի քաղաքացիներ ԱՄՆ-ի վարչակազմէն ստացած զէնքով: Միացեալ Նահանգներ արդար միջնորդ չէ: Զակառակ պարագային, ան պետք է դարձնեն զէնքի առաքումը դէպի Իսրայել: Լիբանանի կամ այլ երկրի վրայ յարձակումի պարագային, Իրան պիտի միջամտէ օժանդակելու համար յարձակումի ենթարկուած երկրին: Զեյնի յայտարարեց, թէ իր երկիրը պատրաստ է ԱՄՆ-ի հետ վերսկսելու բանակցութիւնները Իրանի հիւլեական ծրագիրին շուրջ:

### ԲԱՆՈՒՄՆԵՐ ԻՍՐԱՅԵԼԻ ՄԵՋ

Իսրայելի մէջ բախումներ տեղի կ'ունենան «Յրեյտիմ»ի կրօնական ուսանողներու եւ ոստիկանութեան միջեւ: Անոնք չեն ուզեր ծառայել բանակին մէջ, մինչ երկրի Բարձ-



րագոյն ատենը հաստատեց անոնց զինուորական ծառայութեան մասնակցութեան պարտաւորիչ ըլլալը: Անոնք որպէս բողոքի նշան փակեցին փողոց մը Թել Աւիվ արեւելեան կողմը:

### ԵՐԵՔ ԶԵՐԱԿԱԼԵԱԼ

«Ալ Զորրա» պատկերասփիւռի կայանը հաղորդեց, որ երեք իսրայելացիներ ձերբակալուած են վերջին երկու շաբթուան ընթացքին Իրանի տեղեկութիւն փոխանցելու ամբաստանութեամբ: Կասկածելիներէն մէկուն ճշդուած ամբաստանագիր ուղղուեցաւ:

### ՀՈՒՍԻՆԵՐՈՒ ԿՈՉԸ

Եմէնի հուսիններու «Անսարալլա» կազմակերպութեան ղեկավար Ապտէլմալէք Ալ Զուսի յայտարարեց, թէ բոլոր ուժերը պետք է պայքարին Միացեալ Նահանգներու եւ Իսրայելի դէմ: Ան ասելցուց, որ Պաղեստինեան դատը պետք է ըլլայ բոլորին դատը ու ան ցաւ յայտնեց որ արաբական թոյլ երկիրներ կան: Ան դրացի Սեուտական Արաբիոյ կողմէ ուղղեց չօժանդակելու ԱՄՆ-ի եւ Իսրայելի ծրագրերուն: Ալ Զուսի խոստացաւ հարուածել բոլոր այն ուժերը, որոնք կ'օգնեն Իսրայելին: Պայքարը պիտի շարունակուի մինչեւ Կազախի պատերազմին աւարտը:

### ՅԱՐԱԿՈՒՄ ՕՍԱՆԻ ՄԵՋ

Օմանի մէջ ԱՄՆ-ի դեսպանատունը կանխագուշակեց քայլեր առաւ Երեքշաբթի օրուան յարձակումէն ետք: Յարձակումը տեղի ունեցաւ մայրաքաղաք Մասքաթի մզկիթներէն մէկուն մօտ եւ հրաշարանաձգութեան գոհ գացին չորս քաղաքացիներ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԸ ՎԵՐԱԿԱՏԱՏԵ ԶՆՆՁՆԱԳՈՒԹԻՒՆԵՐ 2030 ԹՈՒՆԿՆԵՐ ՕՐԱԿԱՐԳԻ ԻՐԱՎԱՆՔՆԱՅՄԱՆ

### ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԵԼՈՅԹԸ ՄԱԿ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐԱՔԱԿԱՆ ԶԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Հայաստանը պատրաստ է նպաստելու հեռանկարային ապագայի եւ արդիւններուն միտուած «Ապագայի Պակտի» ընդունման: Այս մասին յայտնած է ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան՝ ՄԱԿ կայուն զարգացման բարձր մակարդակի քաղաքական համագումարի նախարարական հատուածին մէջ իր ելոյթին ժամանակ:



«Այս տարուայ համագումարի թեման չէր կրնար անելի արդիական ըլլալ, քանի որ համաշխարհային հանրութիւնը կը բախի բազմաթիւ փոխկապակցուած մարտափորձերուն եւ ճգնաժամերու՝ փորձելով կատարել կայուն զարգացման նպատակներու խոստումը:

2023թ. Սեպտեմբերին ընդունուած քաղաքական հռչակագիրը ընդգծեց, որ 2030թ. օրակարգը կը մնայ կայուն զարգացման հասցնելու մեր հիմնական ճանապարհային քարտեզը, մինչդէռ կայուն զարգացման նպատակները եւ անոնց թիրախները միտուած են մարդու իրաւունքներու պաշտպանութեան եւ հասնել սեռային հաւասարութեան եւ բոլոր կանանց ու աղջիկներու դերի ամրապնդման հասնելուն:

Այնուամենայնիւ, ինչպէս ընդգծած է Ղլխաւոր քարտուղարը իր վերջին զեկոյցին, բազմաթիւ համընկնող ճգնաժամերը բացասաբար ազդած են կայուն զարգացման նպատակներու իրականացման համաշխարհային յառաջընթացին վրայ՝ բարձրացնելով աղքատութեան մէջ յայտնուած մարդոց թիւը, թուլցնելով պարենային անվտանգութիւնը, մեծցնելով անհաւասարութիւնը եւ ընդլայնելով սեռային խզումը՝ խոցելի խումբերու վրայ յատուկ ազդեցութեամբ: Ուժի կիրառումը, մարդու իրաւունքներու կրպիտ խախտումները եւ ցեղային գտնուածքը կը շարունակեն ձեւաւորել միջազգային յարաբերութիւնները:

Միջազգային հանրութեան համերաշխութիւնն ու արդիւնաւետ համագործակցութիւնը վճռորոշ նշանակութիւն ունին այս բացասական միտումը փոխելու եւ ապագայ սերունդներուն համար ավելի ապահով եւ լաւ աշխարհ թողելու համար: Հաւաքականօրէն որպէս համաշխարհային հանրութիւն, մենք կրնանք իրականացնել յաւակնտու եւ փոխակերպող փոփոխութիւններ, երբ ըլլայ բաւարար քաղաքական կամ վճռակալութիւն:

Այստեղ կը փափաքէի նշել այն հարցապնդումը, թէ արդեօք մենք ի վիճակի ենք ոչ միայն մեր ձայնը լսելի դարձնել, այլ նաեւ օրինակով ցոյց տալ, որ նման միտումի փոփոխութիւնը հնարաւոր է:

Հայաստանը այն երկիրներու շարքինմ էր, որոնք վերջին չորս տարիներու ընթացքին ստիպուած էին դիմակայել բազմաթիւ ճգնաժամերու: Մինչ մենք կը փորձենք միւս երկիրներու նման յաղթահարել համաշխարհային համաճարակը, անոր զուգահեռ լայնածաւալ պատերազմը, յարձակումը Հայաստանի դէմ, Լեռնային Ղարաբաղի մէջ շրջափակման եւ ցեղային գտնուածքի հետեւանքով շուրջ 115.000 հայերու ներհոսքը Հայաստան, կայուն զարգացման նպատակներու իրականացման ուղղութեամբ մեր գործադրած ջանքերը լուրջ վտանգի տակ դրին: Այնուամենայնիւ, անկախ բոլոր մարտահրաւերներէն, Հայաստանը հաւատարիմ մնաց կայուն զարգացման նպատակներու խոստումին եւ իր ժողովուրդին համար իրական փոփոխութիւններու կեանքի կոչման կառուցելով ամուր ժողովրդավարական հիմնարկներ, պաշտպանելով

(Ծար.ը տեսնել 2րդ էջ)

## ԱՏՐՊԵՅՃԱՆ ԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵ

17-18 Յուլիսին Ատրպեյճանի մէջ տեղի պիտի ունենայ «Ֆրանսական գաղութատիրութեան տառապող ժողովուրդներու համագումարը»: Անոր պիտի մասնակցին Զորսիքայէն, Զարիպեան ծովէն, Անթիլեան կղզիներէն, Մեյլանեգիայէն, Փոլինեգիայէն 15 քաղաքական կուսակցութիւններ: Կոատելուփի ազատագրութեան ժողովրդական միութիւնը Պաքուի նախաձեռնող խումբին օժանդակութեամբ պիտի կազմակերպէ այս համագումարը: Հոլանտական եւ ֆրանսական գաղութներ են այս շրջանները: Այս քայլը կը համարուի Պաքուի կողմէ սպառնալիք երկու երկիրներուն՝ Հայաստանին օժանդակելու պարագային տագնապ սկսիլ այս շրջաններուն մէջ:



# ԳՈՒՄ ԳՎՓՈՒԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՅՈՅՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Արեւմտահայաստանի մէջ տեղի ունեցող ամենօրեայ խժոճութիւնները, կողոպուտը, հարստահարութիւնը, իրաւունքներու անտեսումն ու հալածանքները, Պոլսոյ Աշըգեան պատրիարքին ցուցաբերած անտարբերութիւնը առաւել եւս կը քաջալերեն սուլթանը:

Ընկերային, տնտեսական անհանդուրժելի կացութիւն կը տիրէր Արեւմտահայաստանի մէջ: Ո՞վ պիտի լսէր արեւմտահայութեան ձայնը...



Պոլսոյ մէջ այդ ժամանակաշրջանին գործող գլխաւոր յեղափոխական շարժումը Հնչակեան կուսակցութիւնն էր: Հնչակեան կուսակցութիւնը ժողովրդային հաւաքական գանձատները լսելի դարձնելու նպատակով, 15 Յուլիս 1890-ին կազմակերպեց Գում-Գաբուի պատմական եւ նշանաւոր մեծ ցոյցը:

Գում Գաբուի ցոյցը դարձրեց ի վեր ընկճուած, հալածուած, հարստահարուած ու մարտիրոսացած ժողովուրդի մը զայրոյթի պոռթկումն էր: Ան նպատակ ուներ սուլթանին ու կառավարութեան ուշադրութիւնը հրահրել խաղաղ ժողովուրդի մը յաջողակութեամբ իրաւունքներուն վրայ:

Հազարաւոր հայեր, 15 Յուլիսին, դիմեցին Գում Գաբուի Մայր եկեղեցին, ուր կը գտնուէր Աշըգեան հոբել պատրիարքը: Ժամերգութեան պահուն ժողովուրդին եւ ցուցարարներու բռնու պահանջին վրայ հրապարակաւ ընթերցուեցան արեւմտահայութեան բանաձեւած պահանջները: Պատրիարքէն խնդրուեցաւ թափօրը անաշտորոգէլ դէպի Բարձր դուռ՝ ներկայացնելու անոր ցաւերն ու արդար պահանջները: Սուլթանին բարեկամ պատրիարքը փորձեց փախուստ տալ դէպի պատրիարքարան, սակայն ժողովուրդի ու ցուցարարները յաջողեցան արձակուանքներով ստիպել, որ իր հօտին գլուխը անցնէ:

Աղմկալի բացազանչութիւններով պատրիարքին կառքը, ամբոխն ու ցուցարարները դիմեցին Բ. դուռ: Լուրջ արդէն հասած էր սուլթանին: Հազարաւոր զինուորներ յարձակում գործեցին ժողովուրդին վրայ՝ սուլթաններով ու հրացաններով: Տեսարանը ահռելի էր եւ կռիւն անհաւասար՝ զինուորներուն ու ժողովուրդին միջեւ: Հայերը ունեցան բազմաթիւ նահատակներ եւ վիրաւորներ:

Գում Գաբուի ցոյցը համարձակ գործողութիւն էր: Օսմանեան պետութեան մայրաքաղաքը տակաւին չէր տեսած նման բողոք: Օտար մամուլը գնահատեց զայն, իբրեւ առաջին հայ յեղափոխական գիտակցական քայլ, ընկերային, քաղաքական եւ տնտեսական ձգտումներու գործնական արտայայտութիւն:

Գում Գաբուի ցոյցին ներկայացուած պահանջները նորութիւն էին ազատագրական պայքարի գաղափարախօսութեան պատմութեան մէջ:

Հնչակեան կուսակցութիւնը արթնութիւն շեփորեց քաղաքական թմբիով քնացող հայութեան: Սարսափէն կարկամած լեզուները բացաւ, շրթները շարժման մէջ դրաւ, հոգիները վերանորոգեց, գանտը արհացնելէ ետք՝ թուլցած կամքերը պողպատեց եւ գանտը առաջնորդեց դէպի ազատութիւն:

Հայոց պատմութեան նոր անկիւնադարձն՝ 1887-ին յաջողիցեցին ազատագրական պայքարի մեր փառապանծ էջերը՝ Կարսոյ, Գում Գաբուի, Պապ Ալիի ցոյցերը, հանատորի արշաւանքը, Պանք Օթոմանի գրաւումը, Սասունի, Չէթնիկի, Շապին Գարահիսարի, Վանի ապստամբութիւններն ու ինքնապաշտպանութիւնները: Երկար է շարքը...

Հայ յեղափոխութեան վերակերտած նոր հայութիւնը իր կորսուած իրաւունքները նոր ուղիով ձեռք բերել կը ձգտէր, ձանձրացած ու ձեռքազատած հին ուղիներէ եւ փորձէր:

Պետք է վերապրեցնենք մեր մօտաւոր անցեալի փառքերը կազմող այս փառաւոր էջերը, իրենց ներքին հոգիով, որովհետեւ առանց անոնց՝ մենք ներկայի փառքերէն զուրկ եւ գուցէ պատմութեան անցնող ինքնակորոյս ժողովուրդ մը դառնայինք եւ կամ «գոյութիւն» քաշկռտող հաւաքականութիւն:

Փա՛րք եւ պատիւ Գում Գաբուի մեծ ցոյցին եւ անոր հերոսներուն, որոնք ստորկը մարտիկի վերածած մեր ժողովուրդը մղեցին տեր դառնալու իր պատմա-քաղաքական իրաւունքներուն:

ԱՅՐԱՐՈՆ ՇԽԻՐՏՄԵՆԱՆ

# «ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ՏԵՐԵԱԹԱՓ» ԱԶԱՐԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՏԵԼՈՒ ԴԵՊՔՈՎ 5 ԱՆՉ ԿԱՆԱՆԱԴՐՈՒՄԸ Ե

«Հիւսիսային տերեւթափ» անունով ահաբեկչութեան նախապատրաստութեան քրեական գործին նախաքննութիւնը աւարտած է, հաղորդած է Քննչական Կոմիտէն:

2023-ի Նոյեմբերի 1-ին ենթադրեալ յանցաւոր խումբի հինգ անդամները ձերբակալուած եւ կալանաւորուած են: Անոնց անունները Քննչականը չի նշեր՝ միայն կը փոխանցէ, որ հինգ մեղադրեալներու մասը անջատուած է քրեական վարոյթէն եւ վերջիններուն վերաբերեալ վարոյթի նիւթերը, մեղադրական եզրակացութեամբ, ուղարկուած են դատախազին:

2023-ի Նոյեմբերին ԱՄՏ-ն ծայնագրութիւն հրապարակած էր, պնդած, որ ծայնը փոխած տղամարդիկ կը քննարկէն պայթուցիկը ինքնաշարժի տակ յարմարեցնելու հնարաւորութիւնը: Անոնք, ըստ իրաւապահներու, 2023 թուականին մտադիր էին կազմաւուծել իշխանութեան գործունէութիւնը՝ նախապատրաստելով պայթում եւ հակրութեան համար վտանգաւոր արարք:



Կոմիտէն որոշ մանրամասնութիւններ ներկայացուցած է՝ նշելով, որ խումբ մը անձեր 2023 թուականի Մայիսին նպատակադրուած են իրականացնել անձի առողջութեան վնաս պատճառելու, կեանքէն զրկելու, մեծ չափերու գոյ-ջային վնաս պատճառելու եւ այլ ծանր հետեւանքներ յառաջացնելու վտանգով զուգորդուած պայթումներ, հանրավտանգ այլ արարքներ, զաւթել եւ պահել շինութիւններ, հաղորդակցութեան միջոցներ, այդ կերպ ահաբեկել բնակչութիւնը, անոր առանձին խումբերը, կազմաւուծել հանրային իշխանութեան մարմիններու գործունէութիւնը, հանրային իշխանութեան ներկայացուցիչներուն, պետական եւ հանրային ծառայողներուն հարկադրել կատարել իրենց պահանջները, այդ շարքին՝ դադրեցնել լիազօրութիւններուն հետագայ իրականացումը:

(Շար.ը տեսնել 4րդ էջ)

# ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ Ե՛ ԳԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՒՄԸ 224 ՄԻՒԽՈՆ 641 ՀԱԶԱՐ ԴՐԱՄԻ ՎՆԱՍԸ

Դատախազական արձանագրութեան կիրառման պատճառով վերականգնուած է պետութեան պատճառուած 224 միւլիոն 641 հազար դրամի վնասը: Այս մասին յայտնած են Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր դատախազութեան:



«2023 թուականի Յուլիս 25-ին բազմաբնակարան շինութիւններու համալիր կառուցապատող ընկերութեան կողմէ առանձնապէս խոշոր չափերով հարկ չվճարելու դէպքի վերաբերեալ հաղորդման հիման վրայ՝ նախաձեռնուած էր քրեական վարոյթ՝ Զրեական օրէնսգիրքի 290-րդ յօդուածի 3-րդ մասի 2-րդ կէտով (առանձնապէս խոշոր չափերով հարկերը չվճարելը):»

2024 թուականի Մարտ 22-ին վարոյթը իրականացնող մարմինը, յանգելով հետեւութեան, որ ընկերութեան փաստացի ղեկավար, մեղադրեալ Ռ.Կ.-ն վճարած է չվճարուած 206 միլիոն 659 հազար դրամ հարկերը, առկայ են անոր

(Շար.ը տեսնել 4րդ էջ)

# ԱՄՆ ՊԵՏԱԿԱՆ ԸԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ. «ԵՐԵՒԱՆԻ ՈՒ ՊԱՔՈՒԻ ՄԻՋԵՒ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՀՆԱՐԱՎՈՐ Ե, ԲԱՅՅ ԿՈՂՄԵՐԸ ՊԷՏՔ Ե՛ ԾԱՐ ՓՈՒՏԶԻՋՈՒՄՆԵՐՈՒ ԵՐԹՎԱՆ»

Հայաստանն ու Ատրպեյճանը մեծ յառաջընթաց արձանագրած եւ երկար ճանապարհ անցած են խաղաղութեան պայմանագրի կնքման հարցով, յայտնած է ԱՄՆ պետական քարտուղարի խօսնակ Մեթիո Միլըր՝ պատասխանելով ճեպագրոյցի ընթացքին լրագրողի հարցումին հայ-



ատրպեյճանական բանակցութիւններուն վերաբերեալ: Միլըր նշած է, որ Ուաշինկթըն կը շարունակէ յորդորել կողմերուն խաղաղութեան պայմանագրի կնքման հարցով:

«Երկու երկիրներուն միջեւ խաղաղութեան պայմանագիրը շատ մեծ նշանակութիւն պիտի ունենայ այդ երկիրներուն համար: Այն մեծ նշանակութիւն պիտի ունենայ տարածաշրջանի խաղաղութեան, կայունութեան, տարածաշրջանի անվտանգութեան համար: Մենք իրօք կը կարծենք, որ համաձայնութիւնը հնարաւոր է, բայց այն կը պահանջէ երկու կողմերէն կատարել բարդ ընտրութիւններ եւ երթալ ծանր փոխզիջումներու»,- նշած է Միլըր:

Անոր պնդմամբ՝ Ուաշինկթըն պիտի շարունակէ կողմերը մղել դէպի վերջնական համաձայնութեան հաստատում եւ տարածաշրջանի կայունութիւններու հարթեցում: Ան յայտնած է, որ Ուաշինկթընի մէջ կողմերը արձանագրած են յառաջընթաց, սակայն տրամադրած են մանրամասնութիւններ:

«Մենք դեռ համաձայնութիւն չունինք եւ չենք ալ պատրաստուիր հանգստանալու մինչեւ հասնինք անոր»,- եզրափակած է Միլըր:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԵՏՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐ ՈՒ ՕՍՄԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԲՆՆԱԿԱԾ ԵՆ ԵՐԿՈՒ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան, Նիւ Եորք աշխատանքային այցի շրջանակներուն մէջ, հանդիպում ունեցած է Օսմանի տնտեսութեան նախարար Սայիտ Մոհամմատ Տաքրիի հետ:



Ընարկուած են Հայաստանի եւ Օսմանի միջեւ ձեւաւորուած քաղաքական երկխօսութեան համահունչ, նաեւ ոլորտային ուղղութիւններով համագործակցութեան զարգացման հնարաւորութիւնները:

Մասնաւորապէս, անդրադարձ կատարուած է տարածաշրջանային փոխկապակցուածութեան աւելացման, այդ նպատակով տնտեսական եւ փոխադրութեան կապուղիներու ապաշրջափակման եւ ընդլայնման կարելորութեան: Այս ծիրին մէջ, նախարար Միրզոյեան ներկայացուցած է ՀՀ կառավարութեան կողմէ մշակուած «խաղաղութեան խաչմերուկ» նախագիծը՝ ընդգծելով անոր իրականացման միջոցով տարածաշրջանային կայունութեան ու տնտեսական զարգացման համար ընձեռնող հնարաւորութիւնները:

Միտքեր փոխանակուած են նաեւ թուայնացման ոլորտին մէջ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող ծրագրերու իրականացման շուրջ:

Արարատ Միրզոյեան Օսմանի նախարարին ներկայացուցած է նաեւ Հարաւային Կովկասի մէջ անվտանգութեան իրավիճակը, այդ շարքին՝ Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ խաղաղութեան պայմանագրի կնքման կարելորութիւնը:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԸ ՎԵՐԱԿԱՏԱՏՄԸ ՅՎՆՁՆԱԳՈՒԹԻՒՆԸ...

(Շարունակուած Ա. Էջէն)

մարդու իրաւունքները եւ օրէնքի գերակայութիւնը, նպատակով ընկերային ներառականութեան, սեռային հաւասարութեան եւ երիտասարդութեան հնարաւորութիւններու խթանման: Մարդը կեդրոնական դեր կը խաղայ մեր Կառավարութեան՝ 2030թ. օրակարգի իրականացման ջանքերուն մէջ»,- իր ելոյթին մէջ նշած է ՀՀ արտաքին գործերու նախարարը՝ խոստանալով աւելի ուշ ներկայացնել Հայաստանի երրորդ կամար ազգային գեկոյցը, որ կարելի փորձ է՝ գնահատելու կայուն զարգացման նպատակներուն հասնելու յառաջընթացն ու մարտահրա-

ւերները՝ միաժամանակ բացայայտելով քաղուած դատերը:

Եզրափակելով ելոյթը՝ Արարատ Միրզոյեան վերահաստատեց Հայաստանի յանձնառութիւնը 2030թ. օրակարգի իրականացման եւ աւելի լաւ վերականգնելու ջանքերուն՝ ոչ ոքի թողելով ետին:

«Մինչ կը մօտենանք ապագայի գալիք զագաթաժողովին, Հայաստանը պատրաստ է նպատակներու հետանկարային ապագայի եւ արդիւններուն միտուած «Ապագայի Պակտի» ընդունման»,- նշեց ան:





# ԱՐԱՐԱՍ Տնտեսական

ԼԻԲԱՆԱԼ

## ԱՆՏՈՒԿ ԵՒ ՆՈՐ ԱՐՅԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Լիբանանի Ընկերային ապահովագրության հիմնադրամի տնօրեն տոքթ. Մոհամմատ Զարաբի ժողով գումարեց հիանդանոցներու սեփականատերերու սենտիքայի նախագահ Սլեյման Յարունի հետ, քննարկելու համար հիանդանոցներուն բողոքը Հիմնադրամին կողմէ վճարած կարգ մը ծախքի անբարարությունները: Հիանդանոցներու սենտիքայի նախագահը յայտնեց, որ վճարած գումարը կարգ մը գործողություններու պարագային անբարար է և իրենց այս վճարումով չեն կրնար շարունակել աշխատանքը: Կողմերը համաձայնեցան վերատեսուծեան ենթարկել կարգ մը գործողություններու համար կատարուած վճարումները և յարմարցնել իսկական ծախքի գումարին:

Չափի «Թարշիհա» հիանդանոցը սկսած է օգտագործել թույլատրելի և արուեստական բանականության (Artificial Intelligence) արհեստագիտությունները հիանդանոցի տարրալուծարանի և քննություններու բաժիններուն մէջ աւելի կարճ ժամանակին արդիւնքը յանձնելու համար հիանդանոցի, նաեւ աւելի մատչելի սակով:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԿՈՎԿԱՍ

## ՆՈՐ ՈՂՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի Ազգային ժողովի Հայաստան-Գերմանիա բարեկամության խումբի անդամները Պերլինի մէջ քննարկած են Գերմանիոյ օժանդակությունները Հայաստանի տնտեսական զարգացումի հարցերը ու Եւրոպական միության հետ Հայաստանի յարաբերության զարգացումի կարելիությունները: Նաեւ քննարկուած է Ատրպեյճանի հետ խաղաղության համաձայնագիր կնքելու հույժը և Հարավային Կովկասի կայունության հարցը:

Հարավային Կովկասի մէջ իր ազդեցությունը ամրապնդելու համար, ՆԱՌՕ-ն կը փորձէ Ռուսիայէն հեռացնել Վրաստանը, Հայաստանը, Ատրպեյճանը և Ղազախստանը, գործածելով տարբեր ձեւեր իւրաքանչիւր կողմի հետ: Վրաստան, վերջին տարիներուն, նկատելով այն վնասը, որ պիտի կրէ Ռուսիայէն և Չինաստանէն հեռանալով, սկսած է հաւաստարկել իր քաղաքականությունը: Այս ուղղությունը շատ օգտակար չէ Արեւմուտքի համար և ան սկսած է ամեն միջոցներով փորձել ազդել Վրաստանի առած քայլերուն վրայ, տնտեսական և քաղաքական ճնշումի միջոցներով: Ատրպեյճանի և Հայաստանի պարագային, ՆԱՌՕ կը փորձէ համոզել երկու կողմերը՝ կնքելու խաղաղության համաձայնագիրը՝ օգտուելու համար անոր տնտեսական բարիքէն, իրկանության մէջ այս խաղաքարտը գործածելով որպէս միջոց երկու երկիրները Ռուսիոյ ազդեցության գոտիէն հեռացնելու համար:

ՄԻՋԻՆ ԱՐԵՆԵԼ ԵՒ ԱՓՐԻԿԵ

## ԹՈՒՐԵԿԻ ԵՒ ԻՐԱՆ

Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայյիպ Էրտողան յայտնեց, որ Թուրքիա եւ Ռուսիա պիտի զարգացնեն իրենց միջեւ առևտրական կապը և կը ծրագրուի փոխանակումի ծաւալը հասցնել 100 միլիարդ ԱՄՆ տոլարի: Ներկայիս առևտուրի ծաւալը 55 միլիարդ ԱՄՆ տոլար է: Ռուսական Դաշնության նախագահ Վլադիմիր Փութին յայտնեց, որ երկու երկիրներուն միջեւ յարաբերությունը կը զարգանայ, հակառակ Արեւմուտքին կողմէ պարտադրուած պատժամիջոցներուն: 2023 թուականին երկու երկիրներուն ղեկավարները համաձայնեցան քաջալերել երկու երկիրներու գործարարներուն կողմէ ներդրումները: Որոշուեցաւ ռուպլին օգտագործել որպէս վճարումի դրամանիշ:

Իրանի նախագահական ընտրություններու երկրորդ փուլին, երկրի նախագահ ընտրուեցաւ բարեկարգող թեկն պատկանող Մասուտ Փեզեշքիանը, յառաջ անցնելով պահպանողական թեկն պատկանող ժալիլիէն: Նոր նախագահին առջեւ կան քանի մը մարտահրաւերներ, որոնց գլխավորն է Միջին Արեւելքի մէջ պայթուցիկ վիճակը, Արեւմուտքին հետ Իրանի ձգտումը յարաբերությունը պատժամիջոցներու պատճառով, երկրին տնտեսական վիճակը և շրջապային ուժերու ինչպէս Չինաստանի և Ռուսիոյ հետ երկրին յարաբերության մակարդակը ՊՐԻՔՍ-ի շանկիայի խմբաւորումի ու այլ միջազգային մարմիններու մէջ:

ԱՄԻՍ

## ՄՈՏԻՒ ՌՈՒՄԻԱ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոտի այցելեց Մոսկուա և ժողով գումարեց Ռուսական Դաշնության նախագահ Վլադիմիր Փութինի հետ: Արեւմուտքի մէջ լաւ աչքով դիտուեցաւ այս այցելությունը, սակայն Մոտի ցոյց տուաւ, որ գործնական քաղաքական գործիչ է: Պահելով իր դրական կապը Արեւմուտքի, մանաւանդ ԱՄՆ-ի հետ, ան իր կապը չի բաց Ռուսական Դաշնության հետ, հակառակ բոլոր ճնշումներուն: Հնդկաստան եւ Ռուսիա կը համարուին հին դաշնակիցներ և որոշումներու միջոցներու օրէն: Հնդկաստան տնտեսապէս շատ մը թելերով կապուած է Ռուսիոյ հետ, մանաւանդ ուժանիւթի հատուածին մէջ: Մոտի Ռուսիոյ եւ Չինաստանի հետ կը համարուի ՊՐԻՔՍ-ի սիւներէն մէկը և այս տնտեսական համախմբումն է, որ կը տեսնուի բազմաբեւեռ աշխարհի հիմքերէն մէկը:

ԵՐՈՊԱ

## ՖՐԱՆՍԱԿ ԵՒ ՈՒԵՐԱՆԻԱ

Ֆրանսայի մէջ նախագահ Էմանուէլ Մաքրոնի աջ կեդրոն կուսակցությունը գրաւեց երկրորդ դիրքը երկրին մէջ տեղի ունեցած խորհրդարանական արտահերթ ընտրության երկրորդ փուլին: Առաջին դիրքը գրաւեց ժամ-Լիւք Մելանշոնի վարած ձախակողմեան դաշինքը: Մարին Լը Փենի վարած աջակողմեան շարժումը գրաւեց երրորդ դիրքը: Կառավարություն կազմելու համար որելու ուժ չունի պէտք եղած երեսփոխաններու հիւր խորհրդարանին մէջ: Ուրեմն, ձախակողմեան շարժումը եւ նախագահ Մաքրոնի աջ կեդրոն կուսակցությունը պէտք է կազմեն միացեալ կառավարություն մը: Ձախակողմեան պարագային,

ներկայ կառավարությունը պիտի մնայ իշխանութեան վրայ մինչեւ Յուլիս 2025 կամ յաջորդ ընտրության թուականը: Այս ընտրության ամենամեծ տուժողն էր նախագահ Էմանուէլ Մաքրոն, որուն արտաքին և տնտեսական քաղաքականությունը վնաս հասցուցին Ֆրանսային: Այս ժամանակաշրջանին նախագահը պիտի ստիպուի վարել զգոյշ քաղաքականություն, որպէսզի կարենայ խորհրդարանէն ստանալ պէտք եղած քուէն:

Երկու տարուան սպասումէ ետք, Ուերանիոյ պարտաւորները սկսած են պահանջել իրենց տուած պարտքի տուկոսին վճարումը: Այդ տուկոսը կը հասնի երկրի համախառն արդիւնքի 15 առ հարիւրին: Երկրի պարտք-համախառն արդիւնքը համեմատութիւնը հասած է 94 առ հարիւրի սահմանին, որ կը համարուի վտանգաւոր պատերազմի մէջ եղող երկրի մը համար: Այս ժամանակաշրջանին Ուերանիա չունի պէտք եղած կանխիկ գումարը՝ վճարելու համար պարտքին տուկոսը: Ուրեմն, վճարումի երկարածումը մինչեւ 2027 լուծում մըն է, իսկ սնանկություն յայտարարելը երկրորդ լուծում մըն է վտանգաւոր հետեւանքներով:

ԱՄԵՐԻԿԱ

## ՉԻՆԱՍՏԱՆ ԵՒ ՊՈԼԿԻԱ


Չինաստան մեծ ներդրումներ կը կատարէ Հարավային Ամերիկայի մէջ: Փերուի մայրաքաղաք Լիմայէն 70 քիլոմետր հիւսիս գտնուող Չանքայ նաւահանգիստը պիտի արժէ 1,3 միլիարդ ԱՄՆ տոլար: Ցամաքամասին հետ Չինաստանի առևտուրի ծաւալը 2002 թուականի 18 միլիարդ ԱՄՆ տոլարէն բարձրացաւ 2022-ին 450 միլիարդ ԱՄՆ տոլարի: Ներկայիս ԱՄՆ-ի հետ Չինաստան կը համարուի ամենամեծ ներդրում կատարող ցամաքամասին մէջ:

Տնտեսական տագնապը և իշխող կուսակցության մէջ պայքարը ժխտական ազդեցություն ունեցան Պոլիվիոյ քաղաքական կեանքին վրայ ու առիթ տուին պետական հարածի փորձի մը: Սակայն կուսակցության շարքերու վերամիացումը եւ ժողովրդային բողոքը՝ պետական հարուածը կատարողներուն դէմ, տկարացուցին անոր դիրքերը ու իշխող կուսակցությունը վերահաստատեց իր իշխանությունը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏՐԻԿ

## ՈՂՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռուսական Դաշնության նախագահ Վլադիմիր Փութին Շանկիայի համագործակցության կազմակերպության Աթաթայի մէջ տեղի ունեցած գերատիճանի ընթացքին յայտարարեց, թէ Ռուսիոյ եւ կազմակերպության անդամ



երկիրներուն միջեւ առևտուրը տեղի կ'ունենայ տեղական դրամանիշով ու այս յաւելում արձանագրած է 92 առ հարիւր համեմատութեամբ: Ըստ վերլուծողներու, Արեւմուտքի պարտադրած պատժամիջոցները Ռուսիոյ վրայ սկսան հակառակ ազդեցություն ցոյց տալ ու երկիրներ սկսան հեռանալ Արեւմուտքի դրամատուներու SWIFT համակարգէն, երբ պիտի աշխատին պատժամիջոցներու ենթարկուած երկիրներու հետ:

Չինաստանի կառավարությունը պիտի սկսի մաքս գանձել եւրոպական ալքոհոլի տարբեր տեսակի արտադրություններու ներածումին համար որպէս հակադարձութիւն Եւրոպայի դրած մաքսէն չինական ելեկտրական ինքնաշարժներու ներածումին վրայ: Եւրոպական մաքսը կը տարուի 17,4-ն 37,6 առ հարիւրի միջեւ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

## ԱՂԱՍԱԿԱՆԱՑՈՒՄ (Liberalisation)

Տնտեսագիտության մէջ ազատականացումը այն քաղաքականությունն է, որ տնտեսության մէջ պետական հատուածին բաժինը կը նուազեցնէ և մասնաւոր հատուածին բաժինը կ'աւելցնէ: Այսինքն առիթ կու տայ ազատ ձեռնընթացներու զարգացնելու համար իրենց աշխատանքը երկրին մէջ: Համաշխարհային ազգային շարժումին առաջին քայլերէն մէկն էր սեփականաշնորհել (privatize) պետական հատուածէն մաս մը և զայն յանձնել մասնաւոր հատուածին: Այս պատճառով, պետական հատուածը փոքրացաւ, եկամուտը նուազեցաւ և չկրցաւ իր ներկայացուցած ծառայությունը նուազեցնել ու պարտքի մէջ մտաւ: Յունաստանը ասոր ամենալաւ օրինակն էր: Ուրիշ կարելոր հարց մըն ալ կայ, երբ պետությունը կը սեփականաշնորհէ ենթակառուցութեան հատուածը՝ ելեկտրականութիւն, հեռախօս, ուժանիւթ: Այս հատուածները ճակատագրական են պետության գործունեության համար և մասնագետներ կը հաստատեն, որ անոնք պէտք չէ վնաս կանանաշնորհուին, պետության լծակները պահելու համար: Պետություններ, մասամբ քողարկելու համար իրենց անհաշուէտու և ձախողած ծառայության համակարգը, սեփականաշնորհումի գազին, փոխանակ բարեկարգելու գայն: Ծախքէ խուսափիլն ալ ուրիշ պատճառ մըն էր սեփականաշնորհումի: Պիտոճէի սեղմում ունեցող պետություններ նախընտրեցին բեռ թեթեւցնել ու մասնաւոր հատուածին յանձնել ծառայությունները:

Աղբիւրներ՝ «Տը Էքոնոմիսթ», «Ռաշա Թուտլէ», «eurasianet.org» «Աուսուոն» եւ «Ալ Տիլար»

# «ՔԵԶԻ ՀԱՄԱՐ, ՀԱՅԱՍՏԱՆ».

## ՇԱՐԼ ԱԶՆԱՒՈՒՐԻ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԵՆ ԿԻՄՐԻԻ ՄԵՋ

«Քեզի համար, Հայաստան» յոբելեանական համերգով, 14 Յուլիսի երեկոյեան, Կիմրիի «Սեւ բերդ» ամրոցին մէջ ազդարարուեցաւ Կիմրիի մէջ Շարլ Ազնաւուրի ծննդեան 100-ամեակին նուիրուած միջոցառումներուն աւարտը: Աւելի քան չորս ամիս, քաղաքի բոլոր երաժշտական, մշակութային հաստատություններուն մէջ տօնական միջոցառումներ էին՝ Ազնաւուրի 100-ամեակին նուիրուած:



«Սեւ բերդ» ամրոցին մէջ Կիմրիի սիմֆոնիկ նուագախումբին կատարմամբ հնչեցին մեծ երգիչին երգերուն վրայ հիմնուած ստեղծագործությունները, իսկ համերգի աւարտին Կիմրիի արուեստի ու երաժշտական դպրոցներու միասնական աշակերտական երգչախումբին կատարմամբ հնչեց «Քեզի համար, Հայաստան» երգը, որ գործընթացում էր «Անի» փողային նուագախումբի գեղարուեստական ղեկավար Արմեն Ձամուքաշվիլիի:

Կիմրիի փոխքաղաքապետ Լուսինէ Սանոյեան իր ողջունի խօսքին մէջ նշեց՝ սա այն փոքրիկ շնորհակալութիւնն է մեծ երգիչին, որ ահռելի ներդրում ունի յետերկրաշարժեան Կիմրիի զարգացման գործին մէջ:

Համերգի ընթացքին Կիմրիի համայնքապետարանի «Կիմրիի երախտագիտութիւն» յուշամետալով պարգեւատրուեցաւ Գագիկ Պետրոսեանը, որուն ֆինանսական աջակցութեան շնորհիւ Կիմրիի մէջ 2001 թուականին, տեղադրուեցաւ Շարլ Ազնաւուրի արձանը:

Մինչ աշխարհահռչակ երգիչի 100-ամեակին նուիրուած տօնական համերգը, Կիմրիի Շարլ Ազնաւուրի հրապարակին վրայ՝ երգիչի արձանին մօտ, Կիմրիի համայնքապետարանի «Անի» փողային նուագախումբը արուեստի ու երաժշտական դպրոցներու միասնական աշակերտական երգչախումբին հետ հնչեցուց անոր երգերը:

«Այս միջոցառմամբ եւս մէկ անգամ արձագանք կու տանք Շարլ Ազնաւուրի 100-ամեակին: Ազնաւուրեան միջոցառումները Կիմրիի մէջ մեկնարկած են տարեսկիզբին, բայց այսօր թերեւս ամենամեծ ու մասշտաբային միջոցառումներն են, համերգային ծրագրէն յետոյ պիտի ունենանք նաեւ փողոցի անուանակոչութիւն, իսկ տօնական օրուայ վերջին նուագը պիտի հնչէ Կիմրիի պատմական «Սեւ բերդ» ամրոցին մէջ՝ Կիմրիի պետական սիմֆոնիկ նուագախումբին մասնակցութեամբ: Տօնական միջոցառումներ ամենատարբեր ձեւաչափերով պիտի ունենանք մինչեւ տարեվերջ. աշակերտական ընթերցումներ, ցուցահանդէսներ, գիտաժողովներ, փառատօներ, համերգային ծրագրեր», իր խօսքին մէջ նշեց Կիմրիի քաղաքապետարանի մշակոյթի եւ երիտասարդութեան բաժնի պետ Լիլիթ Թովմասեանը:

Միջոցառումները շարունակուեցան Կիմրիի Մուսայէլեան փողոցին մէջ, այն այսուհետեւ պիտի կրէ Շարլ Ազնաւուրի անունը:

Հայաստանի Ազգային հերոս Շարլ Ազնաւուրը 1988-ի երկրաշարժէն օրեր անց արդէն աղէտի գոտիին մէջ էր: Ան ստեղծած է «Ազնաւուր Հայաստանին» հիմնադրամը, որ աղէտի գոտիին մէջ բազմաթիւ ծրագրեր իրականացուցած է: Կենսական եր անոր աշակցութիւնը, բայց կեանքի հետ կռիւ տուող կիմրեցիներուն համար աւելի կարելոր էր Շարլ Ազնաւուրի ներկայութիւնը:

Կիմրիի մէջ 2001 թուականին տեղադրուած է մեծ երգիչ Շարլ Ազնաւուրի արձանը: Արձանի բացման անձամբ Շարլ Ազնաւուրը ներկայ գտնուած է: Հեղինակը՝ կիմրեցի քանդակագործ Սամուէլ Պետրոսեանն է:

«Երբ կը քանդակէի, հարցուցի՝ պարոն Ազնաւուր, ինչպէ՞ս է: Ըսաւ՝ շատ լաւ է, ստուգելու համար երկրորդ անգամ հարցուցի, ըսաւ՝ լաւ է, քանի որ արձանը աւելի երիտասարդ է», - կը պատմէ Սամուէլ Պետրոսեանը:

Արձանին նախաձեռնությունը առաջարկուած է 1996 թուականին, իսկ 1997-ին արդէն մեկնարկած են աշխատանքները, որոնք աւարտած են 2001-ին: Այսպիսով, 22 Սեպտեմբեր 2001-ին արձանը բացուած է: Պատուանդանով այն ունի 6 մետր 70 սմ բարձրութիւն: Արձանը պրոն-գաճոյլ է. պատուանդանը՝ կրակի: «Շատ հետաքրքրական օր էր: Երբ Ազնաւուրին ուղղով քաղաքի մուտքէն մինչեւ արձանին մօտ ուղեկցեցանք, կիմրեցիները 13 տեղ կանգնեցուցին՝ այդքան մատաղ ըրած էին: Մէկ օր առաջ մռայլ, անձրեւոտ օր էր, այդ օրը՝ տաք ու լուսաւոր: Երբ եկաւ արձանին մօտ, ըսաւ՝ առաջին անգամ ժողովուրդին առջեւ պիտի հանուիմ: Յետոյ ալ սաւանդ արձանին վրայէն քաշելով ըսաւ՝ ես փոքրամարմին եմ, բայց հսկայ արձանը ձեզ կը թողեմ», կը պատմէ Սամուէլ Պետրոսեանը:



# ԱՐԱՐԱԴ ԳՐԱԿԱՆ ԿՈՒՆԿՆԵՐ

## ԵՐՈՊԱՅԻ ՄԻՆՉԵՒ 19 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ Ա. ԳՆԱԳՐՈՒՄԸ ԻՏԱԼԻԱ ՅԱՂԹԱՆԱԿՈՎ ՍԿՍԱԲ

Հիսպանիայի Իրլանդիայի մարզադաշտերում վրայ սկսված Երոպայի մինչեւ 19 տարեկան տղոց ախոյեանությունը ավարտական փուլի մրցումները: Իտալիոյ հաւաքականը մրցեցաւ Երոպայի ղեմ, մայրաքաղաք Պել-Ֆասթի մարզադաշտին վրայ: Հաւասարակշռուած մըր-



ցումի 35-րդ վայրկեանին, կիսապաշտպան Պրատե Նշանակեց Երոպայի կոլը, կիսապաշտպան Փետրոսընի փոխանցումով: Սակայն, «Ինթեր Միլան»ի երիտասարդական խումբի կիսապաշտպան Տի Մաճիո՝ 44-րդ եւ «ԱՍ Միլան»ի կիսապաշտպան Չերոլի՝ 51-րդ հաշիւը դարձուցին 2-1, Չուիցերիոյ «Լոզան»ի կիսապաշտպան Փաֆուստիի երկու փոխանցումներով ու հաշիւը դարձուցին 2-1: Իտալիա տարաւ կարեւոր յաղթանակ մը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

**Ա. խմբակ.** - Իտալիա - Երոպայի 2-1  
- Հիւս. Իրլանտա - Ուքրանիա 0-0

## ԵՐՈՊԱՅԻ ԿԻՆԵՐՈՒ ՄԻՆՉԵՒ 19 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ Ա. ԳՆԱԳՐՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻԱ ՀԱՎԱՍԱՐԵՑԱԲ

Լիթուանիոյ մարզադաշտերում վրայ սկսած Երոպայի մինչեւ 19 տարեկան կիներու ախոյեանութեան արտական փուլի մրցումները: Այս հանգրուանին, Գերմանիոյ հաւաքականը մրցեցաւ Հունգարիայի ղեմ, Եռնավա քաղաքի մարզադաշտին վրայ: Հաւասարակշռուած մրցումի 75-րդ վայրկեանին, «Համպուրկ»ի կիսապաշտպան Քրուլը Նշանակեց Գերմանիոյ կոլը: Իսկ «Ֆորթիսա Սիթար»ի յարձակող Հուլիանկա 90-րդ վայրկեանին հաշիւը դարձուց 1-1, «ԱՉ Ալբմար»ի պաշտպան Կուսկի փոխանցումով: Մրցումը ավարտեցաւ հաւասարութեամբ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

**Ա. խմբակ.** - Ֆրանսա - Սերպիա 3-1  
- Լիթուանիա - Անգլիա 0-10  
**Բ. խմբակ.** - Սպանիա - Իրլանտա 0-0  
- Հունգարիա - Գերմանիա 1-1

## ԻՐՈՒՓԱ ԼԻԿԻ ՉՏՈՒՄԻ Ա. ՓՈՒԼԻ ԵՐԹ ՇԵՐԻՖ ՉԻՉԵՑԱԲ

Երոպայի ֆուտբոլի ակումբներու երկրորդ մրցաշարի՝ Իրոուփա Լիկի գտումի առաջին փուլի երթի մրցումներում, որոնք կը մասնակցին միջակ դասուած լիկաներու երկրորդական դիրք գրուած խումբերը, արձանագրուած են հետեւեալ արդիւնքները.

- Էլֆսպորկ (Շուէտ) - Փաֆուս (Կիպ.) 3-0
- Փաքս (Հնգ.) - Քորվինուլ Հիւնտոարա (Ռուս.) 0-4
- Շերիֆ Թիրասպոլ (Մլտ.) - Չիրա (Ատր.) 0-1
- Ռուտմոպիտրո (Սլվբ.) - Թոպոլ (Ղազ.) 5-2
- Պոթել Փլովտիվ (Պլկ.) - Սարիպոր (Սլվն.) 2-1
- Կիլլա Քրաքով (Լեհ.) - Լափի (Քսու.) 2-0

## ՍԱՌԹԿԵՅԹ ՀՐԱԺԱՐԵՑԱԲ

Անգլիոյ ֆուտբոլի հաւաքականի մարզիչ Կարթե Սաութիէն ներկայացուց հրաժարական իր պաշտօնէն: Ան խոստացած էր հրաժարիլ իր պաշտօնէն՝ Երոպայի ախոյեանութեան ընթացքին պարտութեան պարագային: Ան հաւաքականի մարզիչի պաշտօնը ստանձնած էր 2016 թուականին: Սաութիէնը կը համարուի Անգլիոյ հաւաքականի ամենայայտը մարզիչներէն մէկը, որ խումբը երկու անգամ հասցուց Երոպայի ախոյեանութեան արտական հանգրուանին:



## ՃԱՏՐԱԿ ՊԻԷԼԻ ՄՐԱԳ ՃԱՏՐԱԿԻ ՄՐՅԱՆՈՒՄԸ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՇԱՐՇՅԱԲ ՏԻՏՐՈՍԸ

Հայազգի ճատրակի մեծ վարպետ Հայկ Մարտիրոսեան գրուած է առաջին դիրքը «Biel Chess Festival 2024»-ի արագ ճատրակի մրցաշարի մէջ: Երկրորդ դիրքը գրուած է հնդիկ Ռամէշ Կապուրի Գրանտանանտի, իսկ երրորդ դիրքը գրուած է գերմանացի Վինսենթ Բայմըրը:



## ՊԱՔԵԹՊՈԼ ԵՐՈՊԱՅԻ ՄԻՆՉԵՒ 16 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՈՅ. ՀԱՅԱՍՏԱՆ ԳՐԱԿԵՑ 3-ՐԴ ԴԻՐԸ

Հայաստանի մինչեւ 16 տարեկան տղոց հաւաքականը գրուեց Գ. դասակարգի 3-րդ դիրքը, յաղթել էտը Անդրպէճանի հաւաքականին 71-63 արդիւնքով: Հաւաքականի ամենաարդիւնատէ մարզիկն էր Ռաֆայէլ Մասումեան՝ 20 կէտ:



Իսկ Հայաստանի մինչեւ 16 տարեկան աղջիկներու հաւաքականը Գ. դասակարգին մէջ գրուեց 5-րդ դիրքը յաղթել էտը Կրաստանին 77-71 արդիւնքով: Լիլիթ Գերգովա ամենաարդիւնատէ մարզիկն էր՝ Նշանակելով 22 կէտ եւ կատարելով 12 ռիպաստ:

## ԱՅԼԵԹԻՉՍ ԱՐԱՍՆԱԴԷ ԼԻԿԱՅԻ ՄՈՆԱԵՆՅԻ ՄՐՅՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ ՆՈՐ ՄՐՅԱՆԻՇ

Շարունակուեցան աթլետիկայի առաջնակարգ մրցաշարի՝ Արամանդէ լիկայի 2024 տարուան մրցումները: Տեղի ունեցած 9-րդ հանգրուանի՝ Մոնաքոյի մրցումին, կիներու 2000 մետր վազքի մրցումին անտարալիացի Ճեսիքա Հալ արձանագրեց աշխարհի նոր մրցանիշ: Տղոց 400 մետր վազքի մրցումին, ամերիկացի Քուինսի Հոլ, 800 մետր վազքի մրցումին, ալճերիացի ճամէլ Սետճաթի եւ 1500 մետր վազքի մրցումին, Երոպայիցի Եագոպ Ինկէպրիկսթըն արձանագրեցին տարուան ամենալաւ արդիւնք: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Կիներ.**  
-100 մետր վազք. 1) Ժիլիէն Ալֆրետ-Սենթ Լիւսիա 10.85 երկվ.  
-400 մետր վազք. 1) Ռիսիտաթ Անտիլէ-Իրլ. 49.17 երկվ.  
-2000 մետր վազք. 1) Ճեսիքա Հալ-Անտրլ. 5:19.70 վրկ. անմ  
-5000 մետր վազք. 1) Մարկարթե Աքիտոր-Քեն. 14:39.49 վրկ.  
-Ձողափայտով ոստում. 1) Նիկա Բենըտի-Անտրլ. 4.88 մետր-Եռաքայլ ոստում. 1) Լեյանիս Բերթե-Քուպա 14.96 մետր-Սիգալ. 1) Հարուքա Քիթակուլի-Ճամի. 65.21 մետր  
**Տղաք.**  
-200 մետր վազք. 1) Լեթիլ Թեպոկո-Պոնգուան 19.87 երկվ.  
-400 մետր վազք. 1) Քուինսի Հոլ-ԱՄՆ 43.80 երկվ. Աս  
-800 մետր վազք. 1) Ճամէլ Սետճաթի-Ալճ. 1:41.46 վրկ. աս  
-1500 մետր վազք. 1) Եագոպ Ինկէպրիկսթըն-Նոր. 3:26.73 վրկ. աս  
-110 մետր արգելարշաւ. 1) Կրէնթ Հալոուէ-ԱՄՆ 13.01 երկվ.  
-400 մետր արգելարշաւ. 1) Ռայ Պենըմի-ԱՄՆ 46.67 երկվ.  
-Բարձրցատկ. 1) Համիշ Զեր-Նոր Չել. 2.33 մետր Անմ. Աշխարհի նոր մրցանիշ  
Աս. Տարուան ամենալաւ արդիւնք:

## ՓԱՔԻՍԱՏԱՆԻ ՄԷՋ ԶԵՐԲԱԿԱԿԱՆԸ ԵՆ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱԿԵՏ ԽԱՆԸ ԵՒ ԱՆՈՐ ԿԻՆԸ

Փաքիստանի դատարանը մինչեւ 22 Յուլիս ձերբակալած է նախկին վարչապետ Իմրան Խանը եւ անոր կինը՝ Պուշրա Պիպին, նոր մեղադրանքով՝ կապուած ենթադրեալ «պաշտօնի չարաշահման հետ» պետական գանձարանէն Լուէրներ ձեռք բերելու համար:

Փաքիստանի ազգային հաշուետուութեան բիւրօն՝ հակափտածութեան գործակալութիւնը, նոր մեղադրանք առաջադրած է մէկ օր անց այն բանէն յետոյ, երբ 13 Յուլիսին Իսլամապատի դատարանը բաւարարած էր Խանի եւ անոր կնոջ բողոքարկումը՝ չեղեալ համարելով անօրինական ամուսնութեան գործով դատավճիռը. ատիկա վերջին դատական գործն էր, որ «Փաքիստան Թեհրիք Ի Ինսաֆ» (PTI) կուսակցութեան հիմնադիրը կը պահէր բանտին մէջ:

Ամուսինները պետք է դատարանի առջեւ կանգնին 22 Յուլիսին:

2018-2022 թուականներուն Փաքիստանի կառավարութիւնը գլխաւորած Իմրան Խանը պաշտօնանկ եղած է 10 Ապրիլ 2022 թուականին՝ անոր անվստահութեան քուէ յայտնելու հետեւանքով: 2023 թուականի Օգոստոսին Խանը ձերբակալուած է պետական գանձարանին մէջ պահուող թանկարժէք իրերու վաճառքի հետ կապուած խարդախու-



թեան գործով: Ալեյի ուշ անոր դէմ առաջադրուած են եւս շարք մը մեղադրանքներ, որոնցմէ մէկն էր պետական արձանագրութիւնը՝ կապուած գաղտնի հեռագրի հրապարակման հետ: Խանի կողմէ ներկայացուած բողոքարկման քննարկման ընթացքին անոր առաջադրուած մեղադրանքներուն մեծ մասը հանուած է, բայց նախկին վարչապետը մնացած է կալանքի տակ անօրինական ամուսնութեան գործով:

Ալեյի վաղ, ՄԱԿ-ի կամայական ձերբակալութիւններու աշխատանքային խումբը պահանջած էր անյապաղ ազատ արձակել բանտարկուած նախկին վարչապետը՝ յայտարարելով, որ անոր դէմ յարուցուած առնուազն երկու գործեր «քաղաքական դրդապատճառներ ունին» եւ ուղղուած են երկրի քաղաքական կեանքէն անոր հեռացման:

## «ՀԻՄՆԱՅԻՆ ՏԵՐԵՒԱԹԱՓ» ԱՆԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ...

(Շարունակուած Բ. էջէն)

Ըստ հաղորդագրութեան՝ խումբին անդամները, իրենց մտադրութիւնը իրագործելու նպատակով փնտռած են առաւելապէս գիտնորական ծառայութիւն անցած համալիտներ, ինչպէս նաեւ՝ պայթուցիկ սարքեր, լիւթեր պատրաստելու համար գիտելիքներ ունեցող անձեր, ծրագրաւորած են ստեղծել խումբեր՝ տարբեր շինութիւններու, կառոյցներու վրայ յարձակելու համար: Որոշուած է հանրավտանգ գործողութիւնները քանի մը վայրերու մէջ կատարել միաժամանակ: Անոնք նաեւ ձեռք բերած են զինւորական համազգեստ, հանդերձանք, կապի միջոցներ, տեսողական նշանոց, որսորդական դակակներ եւ ձեռնաշղթաներ, մշակուած են գրի առնուած է «Հիւսիսային տերրեալութեան» վերտառութեամբ հանրավտանգ գործողութիւններու հակիրճ ծրագիր, որ յայտնաբերուած է խումբի անդամներէն մէկուն հագուստին գրպանին մէջ:

Քննչականը նաեւ կը նշէ, որ յիշեալ անձեր ապօրինի կերպով հրազէն եւ ռազմամթերք ձեռք բերելու համար 2023-ի ամռան հանդիպելով տակաւին անձը չպարզուած օտարերկրեայ քաղաքացիի հետ՝ պայմանաւորուածութիւն ձեռք բերած են վերջինէն հրազէնի եւ ռազմամթերքի որոշակի խմբաքանակ ձեռք բերելու շուրջ:

«Յանցաւոր խումբը, իր կամքէն անկախ հանգամանքներով, չէ կրցած իրագործել իր յանցաւոր մտադրութիւնը, քանի որ բացայայտուած է ՀՀ Ազգային անվտանգութեան ծառայութեան աշխատակիցներուն կողմէ», - նշուած է հաղորդագրութեան մէջ:

## ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ Է ՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՆՈՒՄԸ 224 ՄԻՒԻՈՆ ...

(Շարունակուած Բ. էջէն)

Նկատմամբ յարուցուած հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքեր՝ միջնորդութիւն ներկայացուցած է հսկող դատախազին՝ մեղադրեալին նկատմամբ յարուցուած հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

2024 թուականի Մարտ 26-ին հսկող դատախազը մերժած է ներկայացուած միջնորդութիւնը եւ շարք մը վարութեան գործողութիւններ կատարելու վերաբերեալ յանձնարարութիւն տուած է նախաքննութիւն իրականացնող քննիչին:

Դատախազի յանձնարարութեան հիման վրայ կատարուած վարութեան գործողութիւններուն շնորհիւ՝ ընկերութեան մէջ հաշուարկուած է լրացուցիչ 224 միլիոն 641 հազար դրամի չափով, այսինքն՝ ընդհանուր 431 միլիոն 300 հազար դրամ հարկային պարտաւորութիւն:

Որպէս արդիւնք՝ Ռ.Կ.-ն ամբողջութեամբ հատուցած է

Նաեւ 224 միլիոն 641 հազար դրամ հարկը՝ ընդհանուր վերականգնելով 431 միլիոն 300 հազար դրամի չափով պետութեան պատճառուած վնասը», - նշուած է Դատախազութեան տարածած հաղորդագրութեան մէջ:

2024 թուականի Յուլիս 15-ին հսկող դատախազը որոշում կայացուցած է ոչ-արդարացնող հիմքով Ռ.Կ.-ի նկատմամբ յարուցուած հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

## ԱՅՍՕՐՈՒՄԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

### ԵՐՈՊԱՅԻ ԿԻՆԵՐՈՒ ՄԻՆՉԵՒ 19 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԸ

- 14:00 Սերպիա (3) - Անգլիա (1)
- 18:00 Լիթուանիա (4) - Ֆրանսա (2)
- ՉԵՏՓԻՆՆԵՆ ԼԻԿԻ ՉՏՈՒՄԻ Ա. ՓՈՒԼԻ ԴԱՐՁ**
- 18:00 Սթրոկա (327) - Սլովակիա Պրաթիսլաւա (61)
- 20:00 Տիբերիաս 03 (328) - Քի Էլաքսվիթ (143)
- 20:00 Տիլամօ Պրաթիսլա (261) - Լուտոկորեց (70)
- 20:00 Փեթրոքապ (202) - Օրտապասի (319)
- 22:00 Էկնաթիա Փրոկոմիլիո (411) - Պորաց (258)
- 22:00 Լաւն (285) - Ռիկա ՖՍ (171)

### ԵՐՈՊԱՅԻ ԸՆԹՃՐԸՆԱՆ ԼԻԿԻ ՉՏՈՒՄԻ Ա. ՓՈՒԼԻ ԴԱՐՁ

- 20:00 ՊՅԵ Թորգիավն (201) - Օտա Ռիկա (381)
- 21:45 Բրուկեյտըրգ (283) - Զայնարթոն (420)

**ARARAD DAILY NEWSPAPER**  
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN  
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael  
Beirut | Lebanon | www.araraddaily.com  
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أجنبية | المديرية المسؤولة: أني صرافيان  
تصدر عن شركة مسيسر والمقافة والنشر (ش.م.م.)